

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ  
ՓՈՐՁԱԳԵՏ ՔՆԱՐԻԿ ՀՈՍՅԱՆԻ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020 Թ. ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. «2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ 08 բաժնի 02 խմբի 05 դասի «12. Կինեմատոգրաֆիայի», «13. Մշակութային ժառանգության», «14. Գրի և գրչության», «18. Արվեստների» ծրագրերով կազմակերպությունների հետ կնքված ընդհանուր 108 164 825 դրամի, որից՝ 4637 հոդվածով՝ 64 898 895 դրամի, 4639 հոդվածով՝ 43 265 930 դրամի դրամաշնորհի հատկացման պայմանագրերի հիման վրա իրականացվել են գանձապետական գործառնություններ և հաշվապահական ձևակերպումներ «Client Treasury» էլեկտրոնային համակարգի միջոցով: Կազմվել են 198 ժամանակացույցեր, 198 քաղվածք-պայմանագրեր, 254 հավաստագրեր, պարտավորություններ:
2. «2020 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ 08 բաժնի 02 խմբի 05 դասի «12. Կինեմատոգրաֆիայի», «16. Արվեստների» ծրագրերով կազմակերպությունների հետ կնքված ընդհանուր 25 564 600 դրամի դրամաշնորհի հատկացման պայմանագրերի հիման վրա իրականացվել են գանձապետական գործառնություններ և հաշվապահական ձևակերպումներ «Client Treasury» էլեկտրոնային համակարգի միջոցով: Կազմվել են 14 հավաստագրեր, պարտավորություններ:
3. ՊՈԱԿ-ների պետական բյուջեով հաստատված ծրագրերի ֆինանսավորում դրամաշնորհի հատկացման պայմանագրերի հիման վրա իրականացվել են գանձապետական գործառնություններ և հաշվապահական ձևակերպումներ

«Client Treasury» էլեկտրոնային համակարգի միջոցով: Կազմվել են 74 հավաստագրեր, պարտավորություններ:

4. Excel էլեկտրոնային ծրագրում մուտքագրվում է 4 հատ «Կինեմատոգրաֆիայի», 20 հատ «Մշակութային ժառանգության», 12 հատ «Գրի և գրչության», 120 հատ «Արվեստների» ծրագրերին վերաբերող բոլոր պայմանագրերը՝ մասնավորապես նշելով կազմակերպության և միջոցառման անվանումները, հրամանի և պայմանագրի համարները, ամսաթվերը, աշխատանքի կատարման, հաշվետվության ներկայացման և պայմանագրի գործունեության ժամկետները, ներկայացված հաշվետվություններում առկա շեղումները, ուշացած օրերի և դրան համապատասխան տույժի գումարները, հսկողություն իրականացնող բովանդակային վարչության անունը, պայմանագրի ընդհանուր գումարը, ֆինանսավորումը, փաստը և մնացորդը:
5. «e-invoicing» հարկային ծրագրով էլեկտրոնային եղանակով նախարարություն ներկայացված 125 էլեկտրոնային հաշիվների հաստատում:
6. Ստուգման արդյունքում ընդունված հաշվետվությունների վերաբերյալ 134 եզրակացությունների կազմում, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում տույժերի գանձում:
7. Այլ ընթացիկ աշխատանքներ՝ գրությունների պատրաստում, ֆինանսական հաշվետվությունների հետ կապված բազմաթիվ հարցերի պարզաբանում և լուծում (նաև բանավոր):

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՔՆԱՐԻԿ ՀՈՍՅԱՆ

«05» «մարտի» 2020 թ.